ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ», «ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքն ընդունելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մշակումը բխում է երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտականությունների լիարժեք իրականացման (երեխայի կարծիք արտահայտելու և լսված լինելու, երեխաներին բռնությունից պաշտպանելու, լավագույն շահի առաջնահերթության, ընտանիքում ապրելու, իրավունքներն ամբողջական ամրագրելու և այլն), կյանքի դժվարին իրավիճակում հայտնված

երեխաների բացահայտման, ուղղորդման, երեխաների հետ առնչվող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ու գործառույթների հստակեցման, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, մասնավորապես՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության առանձին ձևերի կանոնակարգման, օրենսդրական կարգավորումներ պահանջող ու գործնականում հայտնաբերված տարաբնույթ բացերի, իրավական անորոշությունների, ինչպես նաև տեխնիկական վրիպակների կարգավորման անհրաժեշտությունից:

Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեն, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության՝ որպես Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան վավերացրած պետության երրորդ և չորրորդ, ինչպես նաև հիգներորդ և վեցերորդ պարբերական զեկույցները, ներկայացրել էր եզրափակիչ դիտարկումներինչպես 2013 թվականին[1], այնպես էլ 2024 թվականին[2], որտեղ հատուկ շեշտադրում էր կատարվել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում տվյալների հավաքագրման և վերլուծության կարևորությանը, ինչը հաշվի առնելով հնարավոր կլինի նախագծել ոլորտային քաղաքականությունները: Թեև ներկայում առկա է տվյալների հավաքագրման գործիքակազմ, որը ևս ենթակա է արդիականացման, այնուամենայնիվ նույնիսկ գործող տեղեկատվական համակարգում տվյալները բավարար չափով չեն հավաքագրվում և չեն արտացոլում կարիքը՝ քաղաքականություն մշակողներին հստակ պատկերացում չտալով առկա իրավիճակի մասին: Նշվածից հետևում է, որ թեև ներդրվել են ջանքեր, սակայն անհրաժեշտ է ունենալ լիարժեք և համապարփակ տեղեկատվություն՝ կարիքահեն, երեխայի շահերից բխող քաղաքականություն իրականացնելու համար, ինչն անշուշտ երեխայի լավագույն շահերին համապատասխանելուց զատ, կարելի է գնահատել նաև ծախսարդյունավետ՝ հաշվի առնելով մարդկային կապիտալի զարգացման գործում

[1] Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի միասնական 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ, 2013, CRC/C/ARM/CO/3-4

[2] Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի միասնական 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ, 2024, CRC/C/ARM/CO/5-6

երկարաժամկետ և հիմնովին ներդրման հնարավորությունը՝ խուսափելով հատվածային և ոչ ճշգրիտ տեղեկատվության հիման վրա կառուցվող քաղաքականություններից: Այս գործընթացը հնարավոր չէ կյանքի կոչել և գրանցել առավել էական նշանակություն ունեցող փոփոխություններ քանի դեռ համայնքային մակարդակում չկան երեխայի պաշտպանության մասնագիտական աշխատանք իրականացնողներ, ովքեր կապահովեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ ռիսկի տակ գտնվող երեխաների, ինչպես նաև երեխայի պաշտպանության դեպքերի պրոակտիվ բացահայտումը, տեղեկատվության համապարփակ հավաքագրումն ու մշտադիտարկումը: Ներկայում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման համակարգում հաշվառված է շուրջ 10,472 երեխա, որից՝ շուրջ 4,200-ը ծառայություն է ստանում պետական կամ պետության կողմից պատվիրակված ցերեկային խնամքի կենտրոններում, շուրջ 722 անձ (ներառյալ՝ չափահաս անձինք, որոնք չունեն բնակության այլ վայր և շարունակում են խնամք ստանալ մանկատանը) շուրջօրյա խնամք է ստանում պետական հաստատություններում՝ ներառյալ ճգնաժամային հաստատություններում, 170 երեխա խնամք է ստանում խնամատար ընտանիքներում: Այսպիսով, անգամ հայտնաբերված և հաշվառված երեխաների շուրջ 50 տոկոսը չունի կարիքահեն անհատական ծրագիր, չունի կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելու հստակ պլանավորում, քանի որ նման պլանավորում համայնքում մասնագետների բացակայության պայմաններում այժմ իրականացվում է միայն այն երեխաների համար, ովքեր ծառայություն են ստանում որևէ հաստատությունում կամ խնամք են ստանում խնամատար ընտանիքում, ընդ որում նշված դեպքերում ևս համայնքը կարող է ընդհանրապես տեղեկացված չլինել իր տարածքում բնակվող երեխայի՝ դժվարին իրավիճակում հայտնվելու փաստի մասին, քանի որ նշված տեղեկատվական համակարգը նույնիսկ տեխնիկապես համայնքը չի շահագործում ռեսուրսներ չունենալու պատճառով: Մեկ այլ ռիսկի գոտում գտնվող թիրախ են համարվում շուրջ 10,000 հաշմանդամություն ունեցող երեխաները, 1.8 % կամ շուրջ 13,000 ծայրահեղ աղքատ երեխաները, փախստական երեխաները, առանց ծնողական խնամքի

մնացած, խնամակալի կամ հոգաբարձուի հետ բնակվող երեխաները և այլն: Կարիքահեն անհատական ծրագիր և դժվարին իրավիճակի հաղթահարման պլան չունեցող երեխաներն ակամա հայտնվում են ինստիտուցիոնալացման բարձր ռիսկի գոտում միայն այն պատճառով, որ պետությունը չունի մասնագիտական այնպիսի ներուժ, որը կապահովի երեխայի պաշտպանությունը և կարիքահեն մոտեցում կցուցաբերի անկախ գտնվելու վայրից և որևէ կառույցում գրանցված լինելու հանգամանքից՝ դրանով կախնելով երեխայի հաստատությունում հայտնվելը: Ավելին, ներկայում այդ համակարգում հաշվառված երեխաների թիվը չի արտացոլում երկրում բնակվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրական պատկերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ երեխաների պաշտպանության դեպքերի բացահայտման նպատակով համայքների կողմից համակարգային աշխատանքներ չեն տարվում մասնագիտական և ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով: Սրան զուգահեռ, հաստատություններում տարիներ շարունակ խնամվում են երեխաներ, որոնց ընտանիքիների հետ բաժանումը կամ վերամիավորումը վաղ փուլում համապատասխանաբար կանխելու կամ նախաձեռնելու դեպքում՝ երեխաները կշարունակեին ապրել ընտանեկան միջավայրում: Շուրջօրյա խնամք ստացող երեխաների թվում ընդհուպ մինչև 17 տարի մանկատանը բնակվող շահառուները վառ վկայությունն են համակարգի լրջագույն խնդիրների, համայնքում երեխայի ընտանիքի մասնագիտական աջակցության ու ուղղորդման անբավարար լինելու կամ հաճախ՝ բացակայության: Համայնքային սոցիալական աշխատանքի գործընթացում երկիրն ունի գործառույթը վերաձևակերպելու անհրաժեշտություն, քանի որ այն ոչ միայն իրավիճակի հրամայական է, այլ երկարաժամկետ ներդրման մարտահրավեր, քանզի մեկ անգամ ինստիտուցիոնալացումն արդեն իսկ երեխայի հետագա զարգաման գործընթացում թողնում է իր բացասական հետևանքները՝ անկախ կառույցում տրամադրվող խնամքի որակից, իսկ երբ խոսվում է կրկնակի կամ ավել ինստիտուցիոնալացման մասին՝ դա արդեն ուղիղ վտանգ է հետագա 7-10

տարիների ընթացքում առողջ հասարակության ձևավորման գործում:[3] Չնայած այն հանգամանքին, որ պետությունը վերջին տարիներին հիմնել է երեխաների ճգնաժամային աջակցության կենտրոններ և այն հնարավորություն է տալիս կարճաժամկետ աջակցության արդյունքում խուսափել ինստիտուցիոնալ խնամքից՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական երեք կենտրոններում խնամվողների միջինում 22 տոկոսն այնուամենայնիվ ինստիտուցիոնալացվում է[4]: Ընտանիքի հետ աշխատանքը և դեպքերի վաղ փուլում բացահայտումն այն կարևոր միջամտություններն են, որոնք կարող են կանխել դեպքերի՝ ուշ բացահայտումների երբեմն անդառնալի հետևանքները, և որոնց իրականացման կարևորագույն խոչընդոտներից է համայնքներում երեխայի պաշտպանության մասնագետների բացակայությունը:

Թեև 2013 թվականից ի վեր իրականացվել են մի շարք բարեփոխումներ, ինչի մասին վկայում են նաև Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեին երկրի կողմից ներկայացված միասնական հինգերերոդ և վեցերերոդ պարբերական զեկույցները, սակայն ինչպես արձանագրված է 2024 թվականին ստացված եզրափակիչ դիտարկումներում, մի շարք խնդիրներ շարունակում են մնալ արդիական, իսկ համակարգային բարեփոխումների բացակայությունն ակամա նվազեցնում է ընթացիկ կարիքահեն ծրագրերի արդյունավետությունը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներդրված լավագույնս մշակված ծրագրերն իրագործման մակարդակում բախվում են մարդկային և ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար քանակի, իսկ երբեմն նաև՝ բացակայության:

2020 թվականից պետությունը հասարակական կազմակերպություններին պատվիրակման միջոցով սկսեց ծառայություններ տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին: 2022 թվականին ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 743-Ն որոշման մեջ

[3] ՀԱՆՈՒՆ ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ. ՀՀ ԱՍՀՆ ենթակայության ներքո գտնվող երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններում խնամվող երեխաների ուղղորդման պատճառների նկարագրությունը» թեմայով հետազոտության արդյունքների վերլուծություն, 2023, ՀՂՈՒՄ

[4] Տե՛ս նախորդ հղումը:

իրականացվեցին փոփոխություններ և լրացումներ՝ այդ թվում նպատակ հետապնդելով ամրապնդելու ոլորտային կազմակերպությունների և համայնքի դեպք վարողների փոխգործելիությունը՝ խթանելով դեպքերի վաղ բացահայտումը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նաև Լիազոր մարմին) կողմից նշված միջոցառման ընթացիկ մոնիթորինգը ցույց է տալիս, որ շատ դեպքերում, թեև սոցիալական աշխատողների կողմից առկա է համագործակցության պատրաստակամություն, սակայն օբյեկտիվորեն այն լիարժեք չի կարող գնահատվել՝ հաշվի առնելով այդ մասնագետների բազմաթիվ այլ գործառույթները հատկապես համայնքներում, ինչպես նաև երեխաների հետ աշխատանքում մասնագիտացման բացերը:

Լիազոր մարմնի կողմից վերջին հինգ տարիներին ներդրված ջանքերը ցույց են տվել, որ հետևողական աշխատանքի, միջոլորտային համագործակցության ակտիվության արդյունքում հնարավոր է հզորացնել երեխայի պաշտպանության գործընթացը, գրանցել դրական արդյունքներ, սակայն համայնքային մակարդակում դեպքերի նկատմամբ շարունակական հսկողությունը, պրոակտիվ բացահայտումները, երեխաների կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակների կանխարգելումը ոչ միայն անբավարար է, այլ երբեմն անգամ ռիսկային՝ հաշվի առնելով փաստացի համայքային մակարդակում մասնագիտացված ներուժի բացակայությունը:

Դեռևս 2017թվականին Մարդու իրավունքների պաշտպանը խնամակալության և հոգաբարձության մարմինների ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) վերաբերյալ իր արտահերթ զեկույցում ամրագրել է բազմաթիվ թերացումներ ու բացեր, ներառյալ՝ օրենսդրական: Ինչպես այս, այնպես էլ Եվրասիա Համագործակցության Հիմնադրամի կողմից 2020 թվականին իրականացված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» հետազոտությունը մատնանշել են պրոֆեսիոնալ սոցիալական աշխատողների ու ԽՀՀ կողմից մասնագիտացված ու արհեստավարժ մոտեցման պակասը, որը

հանգեցնում է ոչ մասնագիտական կայացված որոշումների և դրա հետ կապված ռիսկերի հատկապես երեխաների և նրանց ընտանիքների համար, սակայն նաև՝ պետության համար: Առկա խնդիրների շարքում մատնանշվել է նաև ԽՀՀ-ի խորհրդակցական բնույթը, ինչպես սահմանված է օրենսդրությամբ, ինչը սակայն հակասության մեջ է մտնում փաստացի երեխաների պաշտպանության ոլորտում հստակ լիազորությունների իրականացմանը մասնակցության հետ, ինչպես նաև՝ գործունեության կամավորական բնույթը և այդ պարագայում մասնագիտացման պահանջների անհնարինությունը:

ԽՀՀ-ների գործունեության արմատական փոփոխությունների անհրաժեշտությանն անդրադարձ է կատարվել նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ 2018 թվականին իրականացված մասնակցային գնահատման հաշվետվությամբ[5]: Գնահատումը վերհանել է, որ չկան ճգնաժամային իրավիճակներում գտնվող ընտանիքների վաղ հայտնաբերման հստակ կանոնակարգեր, ինչպես նաև՝ կանխարգելման ծառայություններ: ԽՀՀ-ները պատասխանատու են այդպիսի կանխարգելման ծառայությունների մատուցման համար, սակայն գործնականում սա խիստ հազվադեպ է տեղի ունենում:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպությունները համատեղ 2018 թվականին իրականացրել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի գնահատում: Գնահատման արդյունքներն արտացոլող զեկույցում նշվում է, որ պրակտիկայում ԽՀՀ կազմում ընգրկված են նաև ոլորտից անտեղյակ անձինք՝ առանց հաշվի առնելու նրանց ցանկությունը, մոտիվացիան, մասնագիտական որևէ փորձառության առկայությունը: Նույն զեկույցում խոսվում է ոչ միայն համայնքային, այլ մարզային մակարդակում մասնագիտական ներուժի ոչ բավարար մակարդակի մասին,

[5] Հայաստանում երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մշտադիտարկում, գնահատում և վերհանված խնդիրներին արձագանք. մասնակցային գնահատման հաշվետվություն, 2018, ՀՂՈՒՄ

մասնավորապես հիշատակվում է սոցիալական աշխատողների, հոգեբանների սակավ թիվը կամ ընդհանրապես բացակայությունը մարզային մակարդում, չնայած իրականացվող աշխատանքի մասնագիտական բնույթին: Մասնագիտական պատրաստվածություն չունեցող պաշտոնատար անձինք առավել խոցելի են ազդեցությունների նկատմամբ, ինչը բարձրացնում է անհիմն և անօրինական որոշումների կայացման հնարավորությունը[6]:

Այս ուսումնասիրություններն ամփոփում են միայն մի մասը ոլորտի զարգացման այն բազմաթիվ խոչընդոտների, որոնք արձանագրվել և շարունակվում են արձանագրվել թե՛ Լիազոր մարմնի, թե՛ ոլորտային համագործակցող կառույցների կողմից: Մասնագիտական ներուժի բացակայությունը կամ ոչ բավարար լինելը հանգեցրել է մի իրավիճակի, երբ երեխաների՝ դժվարին իրավիճակում հայտնվելու ռիսկը ժամանակին չկանխարգելելը դառնում է կյանքին, առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակների հիմք և որպես պահի լավագույն լուծում ծառայում է երեխային ընտանիքից դուրսբերումը:

Պետության դերը որպես կենտրոնական մարմին, որը պատասխանատու է երեխայի իրավունքների իրացման և երեխաների պաշտպանության համար, հստակորեն արձանագրված է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում (ԵԻԿ), որը շեշտադրում է պետության պարտավորությունն ապահովելու երեխայի բարեկեցությունը, ներառյալ վնասից և անտեսումից պաշտպանությունը: Այս դերը բխում է պետության հիմնարար պարտավորությունից՝ երաշխավորելու հասարակության կայուն զարգացումն ու բարօրությունը ոչ միայն ներկայում, այլ նաև ապագա սերունդների համար: Հայաստանի դեպքում այն իր արտացոլումն է գտնել նաև Հայաստանի վերափոխման մինչև 2050 ռազմավարության մեջ, որտեղ պետությունը ևս մեկ անգամ պարտավորվում է ապահովել ամբողջական և լիարժեք հոգածություն

[6] Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանության բնագավառում կոռուպցիոն ռիսկերի գնահատում, 2018, ՀՊՄԻՄ

երեխաների նկատմամբ: Ավելին, Կառավարությունն իր 2021-2026 թվականների ծրագրով ևս շեշտարդել է երեխաների իրավունքների լիարժեք իրացման համար երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացման կարևորությունը՝ ամրագրելով սույն օրենսդրական փաթեթը մինչև 2024 թվականի ավարտը կառավարության կողմից հավանություն տալու մասին որոշման ընդունման պահանջ:

Օրենսդրական փաթեթի ընդունման մեկ այլ անհրաժեշտություն է երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու և զարգանալու իրավունքի իրացմանն ուղղված ծրագրերի բարելավումը, որը ևս կառավարության ծրագրով սահմանվել է որպես կատարման ենթակա միջոցառում և որին անհնար է հասնել օրենքով անհրաժեշտ ամրագրումների բացակայության պարագայում: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների մասին հռչակագրում, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ, 18-րդ, 21-րդ հոդվածներում, Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրումների բնագավառում համագործակցության մասին կոնվենցիայի 1-ին, 4-րդ հոդվածներում և այլն: Այլընտրանքային խնամքի ծառայություններում երեխայի խնամքի, ինչպես նաև որդեգրման օրենսդրական կարգավորումները, քաղաքականությունները և պրակտիկան պետք է հիմնվեն այն հիմնական սկզբունքների վրա, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններից և միջազգային չափանիշներից: Օրենսդրական կարգավորումները պետք է լինեն որոշակի՝ կամայականություններից խուսափելու համար, սակայն միևնույն ժամանակ ճկուն՝ ընձեռելով անհատականացման և տարբերակման սկզբունքը կիրառելու հնարավորություն:

21.12.2017թ.-ին Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում իրականացված փոփոխությունները բարելավեցին համապատասխան օրենսդրությունը, սակայն ամբողջությամբ չկարգավորեցին որոշ հարցեր, օրինակ՝ ընտանիքի վերամիավորման, որդեգրման ընթացքում որդեգրել ցանկացող անձի

և որդեգրվող երեխայի համադրման ընդհանուր պայմանների և փուլերի, որդեգրման և խնամատարության համար խոչընդոտ հանդիսացող պայմանների, որդեգրման դեպքում երեխայի՝ իր ծնողներին ճանաչելու իրավունքի, փաստացի խնամակալությանը և հոգաբարձությանն ու բազմաթիվ այլ հարցերի առնչությամբ:

Այն, որ երեխայի համար լավագույնն իր կենսաբանական ընտանիքում պատշաճ խնամք և դաստիարակություն ստանալն է, անվիճելի է, սակայն եթե ընտանիքը չի կարող իրականացնել կամ չի ցանկանում կատարել այդ կարևոր գործառույթը, պետությունը նախևառաջ պարտավոր է ապահովել, որ երեխան ստանա պատշաճ դաստիարակություն ու խնամք իր կենսաբանական ընտանիքում, իր կենսաբանական ծնողների հետ, իսկ միայն դրա անհնարինության դեպքում՝ պետք է դիտարկվեն խնամքի այլընտրանքային ձևերը՝ նախապատվությունը տալով ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում երեխայի խնամքի կազմակերպմանը: Ինչպես ներկայացվում է երեխայի այլընտրանքային խնամքի ՄԱԿ-ի ուղեցույցով՝ այլընտրանքային խնամքում գտնվող երեխայի հետագա խնամքի կազմակերպումը պարբերաբար պետք է դիտարկվի, վերանայվի, սակայն ներկայում բազմաթիվ են այն դեպքերը, երբ երեխան համայնքից դուրս գալուց և ինստիտուցիոնալ կառույցում հայտնվելուց հետո չի ունենում իր նախկին բնակության համայնքից իր շահերը պաշտպանող որևէ մասնագիտական ներուժ, որը ստանձնելով պատասխանատվություն երեխային կկարողանա հանել այդ իրավիճակից և վերադարձնել համայնք: Թվային ցուցանիշները ցույց են տալիս, որ թեև ապաինստիտուցիոնալացման ուղղությամբ վերջին տարիներին ներդրվել են ջանքեր, փակվել են հաստատություններ, այնուամենայնիվ՝ 2023 թվականի դրությամբ մանկատներ և ճգնաժամային հաստատություններ ընդունվող և դուրսգրվող երեխաների հարաբերակցությունը խիստ փոքր է (մանկատուն և ճգնաժամային կենտրոն ընդունվել են համապատասխաբար 78, 80 և դուրս են գրվել 97, 100 երեխաներ): Երկրում ամենալայն տարածում ունեցող այլընտրանքային խնամքի եղանակը խնամակալությունը և հոգաբարձությունն է, սակայն թե՛ խնամակալների և հոգաբարձուների, և թե՛ նրանց ընտանիքներում

խնամք ստացող երեխաների հաշվառում չի իրականացվում և չնայած նրան, որ ընտանիքահեն խնամքի այս ձևն առավել նախապատվելի է ինստիտուցիոնալ ցանկացած կառույցից՝ այնուամենայնիվ ստացվում է մի իրավիճակ, երբ լիազոր մարմինը, մարզպետի աշխատակազմը կամ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկատվության որևէ աղբյուր չունեն անգամ հստակ արձանագրելու խնամքի այս եղանակում խնամվող երեխաների թիվը: Ավելին, համայնքը, որը խնամքի այս եղանակի սահմանման պատասխանատուն է նույնպես չի վարում որևէ շտեմարան և չի իրականացնում կանոնավոր վերահսկողություն այս խնամքի ձևով խնամվող երեխաների խնամքի որակի նկատմամբ: Ուսումնասիրությունը փաստում է, որ վերջին երեք տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի շուրջ 320 երեխա համալրում է խնամակալ կամ հոգաբարձու ընտանիքներում բնակվող երեխաների շարքերը: Քանի որ փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման հիմնական գործառույթն իրականացվում է համայնքում, ապա անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական ամրագրում, որ այդ երեխաների հայտնաբերման պատասխանատուն համայնքի սոցիալական աշխատողն է, ում այդ հարցում աջակցում են տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, հատկապես՝ առանց ծնողական խնամքի մնացած, երեխաների բացահայտման առանձնահատկությունները, այդ գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը, ինչպես նաև երեխաների ու նրանց վերաբերյալ տեղեկատվության ուղղորդման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում համակարգված, իսկ որոշ դեպքերում՝ նաև կարգավորված չեն, և իրականացվում են այնքանով, որքանով դրանք առնչվում են կոնկրետ դերակատարների հիմնական գործառույթներին: Այդ ամենը հանգեցնում է երեխայի իրավունքների խախտման դեպքերի չբացահայտելուն, իսկ բացահայտման դեպքում այն կարող է չստանալ պատշաճ ուղղորդում և արձագանք: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ամրագրել

համապատասխան կարգը սահմանող լիազորող նորմ, իսկ կարգը հետագայում սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեն ընդգծել է նաև որդեգրման գործընթացի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, որն անշուշտ ավելին է ենթադրում, քան մասնագիտական ներուժի ընդլայնումն ու զարգացումը: ՀՀ կառավարությունը ևս 2019 թվականի հերթական նիստի շրջանակներում անդրադարձել է որգերման գործընթացի բարեփոխման կարևորությանը, որը չի կարող իրականացվել հատվածային՝ առանց համակարգային բարեփոխման՝ հաշվի առնելով դերակատարների, գործընթացների կազմակերպման հիմնովին փոփոխության անհրաժեշտությունը, որն առաջարկվում է սույն փաթեթով: Վերջին երեք տարիների ուսումնասիրությամբ փաստվում է, որ տարեկան շուրջ 97 որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ պետք է իրականացնել վերահսկողություն: Երեխայի որդեգրման և որդեգրման գործընթացի գաղտնիքն արդյունավետորեն պաշտպանելու համար վերանայման անհրաժեշտություն ունի նաև այդ գաղտնիքը կրող անձանց շրջանակը՝ սահմանելով համապատասխան տեղեկատվություն հրապարակելու արգելքը:

Ինչ վերաբերում է խնամատարությանը՝ ապա ոլորտային ակտիվ քաղաքականության արդյունքում խնամատար ընտանիքների թիվը կտրուկ աճ է գրանցել և ներկայում շուրջ 170 երեխա խնամք է ստանում խնամատար ընտանիքում: Երեխաների իրավունքների կոմիտեն կոչ է արել պետություններին ապաինստիտուցիոնալացման քաղաքականության շրջանակներում ներդնել ծրագրեր, որոնք կաջակցեն հաշմանդամություն ունեցող երեխաներին ապրել իրենց՝ ընդլայնված կամ խնամատար ընտանիքներում, մինչդեռ Հայաստանում թեև պետության կողմից ներդրված ջանքերին, մշակված ընթացակարգերին և պետական երաշխիքներին՝ շուրջ յոթ երեխաներ են խնամք ստանում խնամատար ընտանիքներում: Երևույթի պատճառներից մեկն էլ համայքում այն ներուժի բացակայությունն է, որն իրազեկման, ուղղորդման, ապա կայուն և շարունակական աջակցության միջոցով ընտանիքից բաժանվող

հաշմադամություն ունեցող երեխայի հետագա խնամքը կկարողանա կազմակերպել մասնագիտացված խնամատար ընտանիքում: Հատկանշական է, որ համայնքը որևէ գործառույթ չունի թե՛ որդեգրող ընտանիքների, թե՛ խնամատար ընտանիքների առնչությամբ, ինչն ինքնին անիրատեսական է դարձնում ժամանակին պատշաճ աջակցության ցուցաբերումը: Կարևոր է ընդգծել, որ թե՛ խնամատարությունը, և թե՛ խնամակալությունը ժամանակավոր խնամքի ձևեր են, սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ խնամքի այս ձևերում ընդգրկված երեխաների ճնշող մեծամասնությունը տարիներ ի վեր շարունակում է նույն խնամքը ստանալ: Հավելենք, որ Մարդու իրավունքների պաշտպանին 2020 թվականի ընթացքում հասցեագրվել է 85 գրավոր և բանավոր բողոք՝ 87 անձից՝ Երևանի տարբեր վարչական շրջանների և ՀՀ բոլոր մարզերի համայնքների ԽՀՀ-ների՝ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեության վերաբերյալ: Մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի տարեկան իր զեկույցում ևս մեկ անգամ շեշտել է տևական ժամանակ խնամակալության և հոգաբարձության մարմինների վերաբերյալ բարձրացվող խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությունը:[7] Նույն զեկույցում մեջբերվում է Տավուշի մարզի Խաշթառակ գյուղում բնակվող երեխաների հետ տեղի ունեցած դեպքի մանրամասներ՝ հստակ ընդգծելով կանխարգելիչ աշխատանքների բացակայությունը: Ցավոք հիշյալ դեպքը միակը չէ և Լիազոր մարմինը յուրաքանչյուր ամիս բախվում է երեխաների կյանքին, առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակների, որոնք վաղ փուլում չբացահայտվելու, չկանխարգելվելու արդյունքում երեխային առնվազն պատճառում են հոգեբանական խնդիրներ, իսկ երբեմն դառնում ծանր հետևանքների պատճառ կամ հանգեցնում անդառնալի ելքերի:

Երեխաների պաշտպանությունը կարևոր է նաև բռնության դեպքերի կանխագելման և բացահայտման տեսանկյունից: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալների համաձայն՝ աշխարհի մոտ երեք հարյուր միլիոն երեխայի նկատմամբ

[7] https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf

վերջիններիս խնամողների կողմից մշտապես դրսևորվում են բռնարար դաստիարակչական մեթոդներ[8]:

ՀՀ-ում մասնակի է ներդրված երեխայի նկատմամբ բռնության ահազանգման և երեխաների ուղղորդման մեխանիզմը, ոլորտում ներգրավված դերակատարների միջև չկա հստակ դերաբաշխում երեխաների պաշտպանության համատեքստում: Ավելին, այն որ երեխայի նկատմամբ բռնության, երեխայի անտեսման, բուլինգի և անկյունաքարային տարաբնույթ սահմանումներ դեռ նախատեսված չեն ՀՀ օրենսդրությունում ոչ միայն երկրորդային պլան են մղում այդ ծայրահեղ բացասական երևույթների դեմ պայքարը, այլ նաև օրենսդրական բաց են ձևավորում՝ անտեսելով նաև միջազգային ստանձնած պարտավորությունների իրականացումը:

Թեև երեխաների նկատմամբ բռնության առնչությամբ առանձին վիճակագրություն չի վարվում, այնուամենայնիվ երեխաների նկատմամբ առհասարակ քննված վարույթները ցույց են տալիս, որ հաճախ մեղադրյալները լինում են երեխայի ընտանիքի անդամները: 2022 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ 545 քրեական վարույթ [9], իսկ 2023 թվականին՝ 1,159 քրեական վարույթ[10], իսկ 2024 թվականի առաջին կիսամյակում՝ արդեն 1032 քրեական վարույթ [11]: Ընդ որում 2023 թվականին դատարան ուղարկված վարույթներով մեղադրյալների 35 տոկոսը հանդիսացել են անչափահաս տուժողի ընտանիքի անդամներ:

Ինչպես նշվում է Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդմամբ[12]՝ մեկ այլ կարևոր խնդիր է բռնության ենթարկված

---

[8] https://www.unicef.org/protection/violence-against-children

[9] https://investigative.am/news/teghekatvvouthyvoun-hh-qnnchakan-kvomitei-varvouythvoum-2022th-ynthacqvoum-anchaphahasneri-nkatmamb-katarvats-hancagvortsvouthyvounneri-veraberyal-qnnvats-qreakan-varvouythneri-masin

[10] https://investigative.am/news/2023-tvakanin-avelacel-en-inchpes-anchapahasneri-nkatmamb-katarvac-hancagorcoutyounneri-depqerov-naxadzernvac-aynpes-el-dataran-ougharkvac-varouytnery-ampopoum

[11] https://www.investigative.am/news/hh-qnnchakan-komiteoum-2024t-arajin-kisamyakoum-qnnvel-e-anchapahasneri-nkatmamb-katarvac-hancagorcoutyounneri-veraberyal-1-032-qreakan-varouyt

[12] https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf

երեխայի վերամիավորումից հետո մասնագիտական մշտադիտարկումը: Պաշտպանը, մեջբերելով մեկ օրինակ, ցույց է տվել համակարգային խնդիր: Մասնավորապես՝ նշվել է, որ արձանագրվել է դեպք, երբ երեխայի նկատմամբ հայրը սեռական բռնություն է գործադրել, վերջինիս նկատմամբ դեպքի առթիվ հարուցվել է քրեական հետապնդում: Երեխան, որոշ ժամանակ մնալով երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում, վերադարձվել է ընտանիք, երկար ժամանակ շարունակել է ապրել մոր հետ: Այնուհետև համացանցում տարածվել է տեսանյութ և պարզ է դարձել, որ երեխայի մայրը, նույնպես, պարբերաբար բռնության է ենթարկել երեխային: Նույն հաղորդման մեջ նշվել է, որ 2023 թվականին շարունակում են արդիական մնալ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների պատշաճ մասնագիտական որակավորման և պարտադիր վերապատրաստման, միջգերատեսչական համագործակցության ապահովման, վերջիններիս լիազորությունների ոչ պատշաճ իրականացման դեպքում՝ պատասխանատվության հստակ միջոցների սահմանման, աշխատանքային ժամերից հետո աշխատանքի կազմակերպման հնարավորության նախատեսման հետ կապված, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս ինստիտուտի կայացման հարցում բազմիցս հիշատակված խնդիրները:

Հավելենք, որ Կոմիտեն իր դիտարկումներում կարևորել է նաև երեխաների իրավունքների պաշտպանության ռազմավարությունների արդյունավետ իրագործման համար պետության կողմից համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների ներդրումը՝ ընդգծելով պետության պարտավորությունը տեղական մակարդակում երեխաների պաշտպանության մասնագիտական ներուժի ներգրավման և հզորացման հարցում: Կոմիտեն վերը նշված և մի շարք այլ դիտարկումներով անդրադարձ է կատարել երեխայի պաշտպանության համակարգի բարելաման խիստ կարևորությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական քաղաքականությունն ուղղված է ծառայությունները դարձնել ընտանիքին և մասնավորապես՝ երեխային, առավել մոտ՝ ակնհայտ է, որ ոլորտային օրենսդրության փոփոխության

առանցքում պետք է լինի նախևառաջ համայնքում երեխայի պաշտպանության գործընթացի հզորացումը, սակայն ոչ պակաս կարևոր է տարածքային մակարդակում երեխայի պաշտպանության համակարգային փոփոխությունները քանի որ մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության գործառույթներում ևս ամրագրվում են արդիականացման, արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն, որոնք հնարավորություն կտան համայնքի հետ առավել սերտ կապի միջոցով ապահովել երեխայի լավագույն շահը, երեխայի պաշտպանության բարդ դեպքերում հստակ որոշել երեխայի լավագույն շահը և ձեռնարկել համապատասխան միջոցներ: Տարածքային մակարդակում չկա բազմամասնագիտական խորհուրդ, որը հնարավորություն կունենա դիտարկել դեպքերը, առաջարկություններ ներկայացնել համապատասխան մարմիններին, սակայն պետք է ի նկատի ունենալ, որ տարածքային մակարդակում կայացվող որոշումներն էական նշանակություն ունեն երեխայի կյանքում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդհանուր առմամբ մարզպետների աշխատակազմերի երեխաների իրավունքների պաշտպանության գործառույթ ունեցող 34 աշխատակիցներից միայն 6-ն են սոցիալական աշխատողներ, համեմատության համար նշենք, որ Երևան քաղաքում երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող սոցիալական աշխատողների թիվը 53 է:

Անդրադարձ կատարելով երեխայի իրավունքների պաշտպանության երրորդ աստիճանին, նշենք, որ միջգերատեսչական սկզբունքով կազմված Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը կրում է խորհրդակցական բնույթ, իսկ աշխատանքները կազմակերպվում են քննարկումների ձևաչափով: Հաշվի առնելով մի շարք երկրների հաջողված փորձի ուսումնասիրությունը՝ հանրապետական մակարդակում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի գործունեության և երեխայի լավագույն շահի պաշտպանության ապահովման նպատակով պետական միասնական քաղաքականության մշակման համար անհրաժեշտ է այս հանձնաժողովի

լիազորությունների շրջանակի, նպատակների և խնդիրների, գործունեության իրականացման կարգի հստակեցում, գործունեության արդյունավետության բարձրացում: Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի առջև դրված նպատակի իրագործման հարցում կարևոր է նաև վերջինիս օժտել անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով: Ընդ որում՝ նման դիրքորոշում է հայտնել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն իր՝ 2013 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած ամփոփիչ դիտարկումներում:

Օրենսդրական սույն նախաձեռնության անհրաժեշտությունը բխում է նաև երեխայի լսված լինելու իրավունքն ապահովելու կարևորությունից: Հայաստանի Հանրապետության 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությամբ երեխայի իրավունքների սահմանադրաիրավական պաշտպանության ամրագրումը կարևոր քայլ էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում, սակայն հետագա քայլերը ոչ բավարար էին՝ ամրագրված դրույթներն ամբողջական իրականացնելու համար: Գործող սահմանադրաիրավական կարգավորումից ակնհայտ է, որ երեխայի կարծիքը հաշվի է առնվում հիմք ընդունելով ոչ միայն երեխայի տարիքը, այլև հասունության մակարդակը, որն ուղղակիորեն անդրադառնում է ձևավորած կարծիքի բովանդակության վրա: Երեխաների լավագույն շահն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում 2017թ.-ից, երբ լրամշակվեց Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածը: Այդ փոփոխությունից հետո չեն մշակվել հստակ չափորոշիչներ կամ չափանիշներ, որոնք իրավակիրառողի մոտ կձևավորեն հմտություններ երեխայի լավագույն շահը հաշվի առնելու առնչությամբ, ինչը գործնականում տարաբնույթ մեկնաբանման և երեխային վերաբերող որոշ հարցերի առնչությամբ հավելյալ կարգավորումների անհրաժեշտություն առաջացրեց: Ավելին, նույն օրենսգրքում առկա որոշ նորմեր չեն անդրադարձել լավագույն շահի առանձնահատկություններին նախատեսված գործընթացների շրջանակներում՝ փաստացի այդ նորմերը չդարձնելով երեխայազգայուն և երեխայակենտրոն ու խոչընդոտելով այդ նորմի լիարժեք իրականացմանը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության սահմանադրության 37-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 44-րդ և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի 10-րդ հոդվածները սահմանում են երեխայի՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը, որի իրականացումը գործնականում ևս բարդություններ է առաջացնում: Առավել ևս, որ այս հոդվածներն ունեն որոշակի հակասություններ, որոնց շտկման առնչությամբ արդեն նախաձեռնվել են սույն օրենսդրական փոփոխությունները:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինն օրենքով նախատեսված դեպքերում ներգրավում է մանկական հոգեբանի կամ մանկավարժի կամ սոցիալական աշխատողի: Սակայն, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: Այսինքն, ստացվում է, որ տարիքային հատկանիշը որոշ դեպքերում բավարար է կարծիքը հաշվի առնելու համար՝ անտեսելով երեխայի հասունությունը, իսկ ներգրավվող մասնագետների շրջանակը վերանայման կարիք ունի:

Եթե երեխան՝ անկախ տարիքից, հասել է զարգացման այն աստիճանին, որ կարող է գիտակցված որոշումներ կայացնել և արտահայտվել, ապա դա պետք է որոշվի՝ երեխայի նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելով և նրա անհատական հատկանիշները հաշվի առնելով՝ կշռադատելով երեխայի կարծիքը և այն օգտագործելով երեխային վերաբերող որոշումներ կայացնելիս:

Նման մասնակի, չհամակարգված և դրվագային մոտեցումները չեն ապահովում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային

պարտավորությունների կատարումը և պրակտիկայում երեխայի լավագույն շահերի իրացումը:

Ելնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում իրականացված փոփոխություններից՝ անհրաժեշտություն առաջացավ միաժամանակ լրացումներ կատարել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ են իրականացվել եզրույթների համահունչությունն ապահովելու, միասնական տերմիններ կիրառելու համար:

Հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմած քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումների ուսումնասիրությունների արդյունքները՝ անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքում, որտեղ հարկ է փոփոխել և լրացնել ալիմենտի վճարման վերաբերյալ դրույթը և հոդվածի առանձին մասով նշել, որ ալիմենտի վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով:

Երեխայի որդեգրման գործընթացը երեխայի համար քիչ տրավմատիկ և սթրեսային դարձնելու համար առաջարկվում է լրացում կատարել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Երեխան պետք է մասնակցի որդեգրման գործերով դատավարությանը միայն անհրաժեշտության դեպքում և երեխայի ու դեպքի անհատական կարիքները հաշվի առնելով, իսկ համապատասխան դատական ակտի կայացման ժամկետը պետք է լինի հնարավորինս կարճ:

Հայաստանի Հանրապետությունում երեխաների որդեգրման օրենսդրության ուսումնասիրության ու վերանայման անհրաժեշտությունը մատնանշվել է ինչպես պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից:

Երեխայի մասնակցությունը ցանկացած դատավարության հանդիսանում է տրավմատիկ և սթրեսային գործոն, ու միջազգային լավագույն փորձը միտված է հնարավորինս նվազեցնել երեխայի մասնակցությամբ դատավարությունների

ֆորմալիզացիան ու հնարավորության դեպքում երեխային պետք է չհրավիրել դատական նիստերի դահլիճ: Երեխան դատական նիստերի դահլիճ կարող է հրավիրվել միայն բացառիկ դեպքերում, ելնելով այն անհրաժեշտությունից, որ միայն երեխան կարող է հայտնել որոշակի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դատավորին դիրքորոշում հայտնելու և համոզմունք ձևավորելու համար:

Գործող օրենսդրության համաձայն 14 տարեկանը լրացած երեխաները պարտադիր պետք է մասնակցեն որդեգրման գործերով դատավարություններին, ինչը հաճախ ձևական բնույթ է կրում ու լոկ սահմանափակվում է երեխայի՝ դատարանի դահլիճում գտնվելով ու նախկինում բացահայտված ու ակնհայտ տեղեկությունների վերահաստատմամբ: Մինչդեռ 14 տարեկանը լրացած երեխաներն անգամ չպետք է մասնակցեն դատավարություններին, եթե դա որևէ նշանակություն չի ունենա գործն ըստ էության լուծելու համար: Բացի այդ, 14 տարեկանը չլրացած երեխաները նույնպես պետք է ունենան հնարավորություն մասնակցել դատական նիստին՝ ելնելով կոնկրետ գործի առանձնահատկություններից:

Անկախ որդեգրման գործով երեխայի անմիջական մասնակցությունից՝ որդեգրվող երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, դատարանը հաշվի է առնում երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան: Կարծիքը կարող է ներկայացվել գրավոր, բանավոր կամ տեսաձայնագրությամբ: Երեխայի կարծիքը վերարտադրելիս կամ լսելիս դատարանը ներգրավում է մանկական հոգեբանի, մանկավարժի կամ սոցիալական աշխատողի: Երեխայի գրավոր կարծիքը ներկայացվում է մանկական հոգեբանի, մանկավարժի կամ սոցիալական աշխատողի գրավոր կարծիքի հետ միասին:

Բացի այդ, կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ են իրականացվել երեխայի և սոցիալական պաշտպանության ոլորտում, ինչը հանգեցրել է նոր դերակատարների առաջացման, որոշ դերակատարների գործառույթների վերանայման, համագործակցության անհրաժեշտության և այլ հարցերի: Օրինակ, ստեղծվել է միասնական սոցիալական ծառայությունը և դրա

տարածքային կենտրոնները, որոնք իրականացնելու են ընտանիքի սոցիալական գնահատումը, որը հաշվի է առնվելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելիս, իսկ այդ հարցին անդրադարձ Հայաստանի Հանրապետության գործող ընտանեկան օրենսդրությունը չի իրականացնում:

Անդրադառնալով առաջարկվող նոր «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այդ օրենքով «Երեխայի իրավունքների մասին» օրենքը փոխարինելուն, ապա կարևոր է հիշատակել, որ գործող օրենքն ընդունվել է 1996թ-ին և ամբողջական արդիականացման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով միջազգային կոնվենցիոն առաջարկություններն ու դիտարկումները: Նաև գործող օրենսդրությունը չի նախատեսում երեխայի պաշտպանության համակարգը, դրա ներդրման և հստակ դերաբաշխման կարգավորումները: Հարկ է նշել, որ հետխորհրդային Հայաստանում ներդրվեց երեխաների իրավունքների պաշտպանության համակարգ՝ երեխաների իրավունքներին առնչվող միջազգային համապատասխան փաստաթղթերի վավերացումով և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի իրավակարգավորումներին ուղղված օրենսդրության ձևավորմամբ, սակայն այն չէր արդիականացվել՝ առավել ևս հաշվի առնելով թե՛ միջազգային միտումները, թե՛ ՀՀ կողմից վավերացված նոր կոնվենցիաները, օրինակ՝ Երեխաներին սեռական բռնությունից և սեռական շահագործումից պաշտպանության մասին Լանզարոտեի կոնվենցիան:

Գործող օրենսդրությամբ նախատեսված երեխայի իրավունքների մի մասը ձևակերպված են դեկլարատիվ՝ առանց մանրամասնելու դրանց բովանդակությունը, իսկ երբեմն նաև սխալ եզրույթների կիրառմամբ, ինչը բարդացնում էր թե՛ օրենքի կիրառելիությունը, թե՛ մեկնաբանությունը, թե՛ այդ օրենքից բխող միջոցառումների իրականացումը կամ ենթաօրենսդրական ակտերի նախագծումը:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրության և վերը թվարկված այլ իրավական ակտերի վերանայման, ինչպես նաև «Երեխայի

իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» առաջարկվող նոր օրենքի ընդունման նախագծերը պայմանավորված է նաև այն փաստով, որ առկա գործնական բացերը հնարավոր չէ կարգավորել առանց օրենսդրական փոփոխությունների և համապատասխան լիազորող նորմերի նախատեսման, ինչը կհանգեցնի հետագայում Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանների ընդունման կամ վերանայման:

Երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի նման կարգավորման համար հիմք են ծառայում միջազգային փորձի այնպիսի օրինակներ, ինչպիսիք են Շվեդիայի[13] և Չեխիայի[14] փորձը, ինչպես նաև հետխորհրդային մի շարք երկրների, այդ թվում՝ Էստոնիայի[15], Լիտվայի[16] փորձը, որոնք ունեն ՀՀ-ի հետ պատմական նույն ակունքները:

Վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ երեխաների պաշտպանությունն իրականացվում է հիմնականում նույն տրամաբանությամբ և համակարգն ընդգրկում է հետևյալ մարմինները.

- Կառավարությունը, որի խնդիրն է մշակել երեխաների պաշտպանության օրենսդրական նախագծեր և ազգային ռազմավարություններ: Էստոնիայի օրինակում տեսնում ենք, որ այն իրականացնում է նաև բյուջետային պլանավորում:
- Սոցիալական հարցերի կամ Զբաղվածության կամ Սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարությունը,
- Արդարադատության նախարարությունը,

---

[13] Շվեդիայի կառավարության կայք՝ https://www.government.se/articles/2018/04/questions-and-answers-about-incorporating-un-convention-on-the-rights-of-the-child-into-swedish-law/

[14] Չեխիայի աշխատանքի և սոցիալական գործերի նախարարության կայք՝ https://www.mpsv.cz/web/en/system-of-social-and-legal-protection-of-children-in-the-czech-republic

[15] Էստոնիայի սոցիալական ապահովության խորհուրդ՝ https://www.sotsiaalkindlustusamet.ee/en/family-and-child-protection/child-protection#Child%20Protection%20Department

[16] Լիտվայի Երեխայի իրավունքների պաշտպանության և որդեգրման ծառայություն՝ https://vaikoteises.lt/protection-of-children/the-lithuanian-child-rights-protection-system-/

- Կրթության և գիտության նախարարությունը,
- Առողջապահության նախարարությունը,
- Երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող հատուկ խորհուրդը կամ հանձնաժողովը, որի էությունը համանման է ՀՀ-ում տվյալ գործառույթն իրականացնող հանձնաժողովի հետ: Դրանք կոլեգիալ մարմիններ են, որոնց գործունեության հիմնական նպատակն է իշխանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համագործակցության ապահովումը՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, երեխայի պաշտպանության համակարգի կազմակերպումը և համակարգումը, երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում օրենսդրության կենսագործումը: Այստեղ երեխաների պաշտպանության վերաբերյալ բոլոր տեղեկություններն ուղղվում են երեխաների և ընտանիքների նկատմամբ քաղաքականության և ռազմավարությունների մշակմանը:
- Սոցիալական ապահովագրության խորհուրդը (Social Insurance Board), որը գործում է Էստոնիայում՝ սահմանում է պետական նպաստներ, արտոնություններ և այլ ծառայություններ երեխաների համար: Սոցիալական ապահովագրության խորհրդի Երեխաների պաշտպանության դեպարտամենտը (Child Protection Department) աջակցում է երեխաների հետ աշխատող մասնագետներին և ղեկավարում է միջճյուղային պրոֆիլակտիկան և համագործակցությունը (սոցիալական ոլորտ, կրթություն, բժշկություն, իրավական պաշտպանություն): Երեխաների պաշտպանության դեպարտամենտն ազգային գործադիր մարմին է, որը ստեղծվել է 2016 թվականին՝ նպատակ ունենալով տեղական իշխանություններին աջակցել երեխաների պաշտպանության և տեղական մակարդակում երեխաների պաշտպանությանն ուղղված աշխատանքների որակի բարձրացման գործում:
- Լիտվայի Հանրապետությունում Սոցիալական անվտանգության և աշխատանքի նախարարությունը մասնակցում է երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականության մշակմանը, պատասխանատու է այդ

քաղաքականության համար և համակարգում է դրա իրականացումը, մշակում է ընտանիքի ամրապնդմանն ուղղված քաղաքականությունը և համակարգում դրա իրականացումը: Նախարարությունը, ի թիվս այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հաստատությունների՝ ապահովում է երեխայի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը՝ օրենքի պահանջներին համապատասխան, վերլուծում է երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ հաստատությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունը, գնահատում է երեխայի իրավունքների պաշտպանության իրավիճակը երկրում, պատրաստում է իրավական ակտերի նախագծեր և դրանք ներկայացնում Կառավարությանը, հանձնարարություններ է տալիս Երեխայի իրավունքների պաշտպանության և որդեգրման պետական ծառայությանը՝ կապված երեխայի իրավունքների պաշտպանության իրացման հետ, առաջարկներ է ներկայացնում համայնքային իշխանություններին՝ կապված երեխայի իրավունքների պաշտպանության արդյունավետ ապահովման հետ, ֆինանսավորում է ընտանիքի ամրապնդման և երեխայի բարեկեցության ապահովմանն ուղղված ծրագրերը և համագործակցում է այլ մարմինների հետ՝ երեխայի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման նպատակով[17]: Լիտվայի Հանրապետությունում գործող միասնական կենտրոնական մարմինը՝ Երեխայի իրավունքների պաշտպանության և որդեգրման պետական ծառայությունը, երեխայի իրավունքների ապահովման և պաշտպանության կենտրոնական հաստատությունն է, որը կենսագործում է Երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականությունը համայնքի տարածքում և մասնակցում է Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական

[17] The Lithuanian child rights protection system
(հասանելի է հետևյալ հղումով՝ https://vaikoteises.lt/protection-of-children/the-lithuanian-child-rights-protection-system-/)

քաղաքականության մշակմանը՝ ինքնուրույն կամ իր տարածքային ստորաբաժանումների միջոցով[18]:

Այսպիսով՝ զուգահեռներ կարող ենք անցկացնել ՀՀ-ում ազգային հանձնաժողովի հետ, քանի որ այն խորհրդակցական մարմին է, և դրա գործունեության հիմնական նպատակը երեխայի շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության մշակմանը նպաստելն է:

Ինչ վերաբերում է մշտադիտարկման մեխանիզմին, ապա մի շարք երկրներում, օրինակ՝ Իսլանդիայում[19], դա իրականացվում է միջգերատեսչական հանձնաժողովի, Չեխիայում, Մոնտենեգրոյում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության[20], Նորվեգիայում՝ Երեխաների և հավասարության պաշտպանության նախարարության[21], Հունգարիայում, Բոսնիա-Հերցեգովինայում[22]՝ Մարդու իրավունքների հարցերով նախարարության ստորաբաժանման, Բուլղարիայում՝ Երեխաների պաշտպանության պետական գործակալության[23], Վրաստանում՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ իր լիազորությունների սահմաններում ստեղծված պատասխանատու գրասենյակի (կառուցվածքային միավորի) կողմից[24]:

---

[18] The Regulations Of The State Child Rights Protection And Adoption Service Under The Ministry Of Social Security And Labour
(հասանելի է հետևյալ հղումով՝ https://vaikoteises.lt/about-us/regulations_1/)

[19] Իսլանդիայի ազգային զեկույց, 07.02.2019; https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fISL%2f5-6&Lang=en

[20] Չեխիայի ազգային զեկույց, 13.08.2018; https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fCZE%2f5-6&Lang=en; Մոնտենեգրոյի ազգային զեկույց՝ 30.11.2016; https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fMNE%2f2-3&Lang=en

[21] Նորվեգիայի ազգային զեկույց, 06.10.2016; https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fNOR%2f5-6&Lang=en

[22] Բոսնիա-Հերցեգովինայի ազգային զեկույց, 21.12.2017; https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fBIH%2f5-6&Lang=en

[23] Բուլղարիայի ազգային զեկույց, 08.04.2014; https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fBGR%2f3-5&Lang=en

[24] The code on the rights of the child, (հասանելի է հետևյալ հղումով՝ https://matsne.gov.ge/en/document/view/4613854?publication=0)

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և Իսլանդիայում, որպես երեխաների իրավունքների պաշտպանության պետական օղակում գործող համակարգման և մշտադիտարկման կառուցակարգ, դիտարկվել է միջգերատեսչական մակարդակում գործող հանձնաժողովի գործունեությունը:

Օրենսդրական բարեփոխումների սույն փաթեթն անդրադարձ է կատարում նաև ծնողական իրավունքների զրկման և սահմանափակման հարցերին: Ծնողական իրավունքների զրկումը՝ պայմանավորված քրոնիկ ալկոհոլամոլությամբ, թմրամոլությամբ, թունամոլությամբ կամ քրոնիկ հոգեկան հիվանդություններով, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հակասում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային, որի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան չբաժանվի ծնողներից իր կամքին հակառակ՝ բացի այն դեպքերից, երբ դատական հսկողություն իրականացնող մարմինները, կիրառելի օրենսդրության ու ընթացակարգերի համաձայն, որոշում են կայացնում, որ նման բաժանումն անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի բարձրագույն շահերից: Ոչ մի դեպքում երեխան չպետք է բաժանվի ծնողներից երեխայի կամ ծնողներից մեկի կամ երկուսի հաշմանդամության պատճառով: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ պետությունը ձեռնարկում է միջոցներ, որպեսզի երեխան չբաժանվի (չառանձնացվի) հաշմանդամություն ունեցող ծնողից (ծնողներից) նրա (նրանց) հաշմանդամության պատճառով՝ ծնողի (ծնողների) կամքին հակառակ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ելնելով այս հանգամանքից և առաջնորդվելով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածով, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 7-րդ հոդվածով, անհատական մոտեցում դրսևորելը և կոնկրետ իրավիճակում մասնագիտական գնահատում իրականացնելով ծնողական իրավունքներից զրկելու կիրառումն իրականացնելն առաջնային է: Քրոնիկ ալկոհոլամոլությամբ, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ, ինչպես նաև քրոնիկ հոգեկան

հիվանդություններով (ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը) հիվանդ լինելն ինքնին ծնողական իրավունքների զրկման հիմք հանդիսանալ չի կարող և խտրական վերաբերմունք է նախևառաջ հոգեկան առողջության խնդիր կամ կախվածություն ունեցող անձանց համար, որի դեպքում լոկ հիվանդության կամ այլ կախվածության առկայությունը հանդիսանում է նրա իրավունքների զրկման համար բավարար և միակ հիմքը: Այնինչ, ծնողական իրավունքներից զրկումը պետք է իրականացվի անհատական տարբերակով դեպքի վարման և գնահատման արդյունքում, որը պետք է պատասխանի հետևյալ և այլ հարցերի՝ արդյոք քրոնիկ ալկոհոլամոլությունը, թմրամոլությունը կամ թունամոլությունը, ինչպես նաև քրոնիկ հոգեկան հիվանդությունն անդրադառնում են այդ անձի կողմից ծնողական իրավունքների իրականացման վրա, թե՝ ոչ, ազդում են երեխայի նորմալ զարգացման վրա, թե՝ ոչ, բխում է երեխայի լավագույն շահերից, թե՝ ոչ: Հետևաբար, միայն կոնկրետ անձի մոտ առկա կոնկրետ հիվանդության և կախվածության բնույթը, դրա ծանրության աստիճանը և այլ հանգամանքները, ինչպես նաև դրանց ազդեցությունը ծնողական իրավունքների իրականացման վրա, կարող են առաջացնել ծնողական իրավունքների զրկում:

Ծնողական իրավունքների չարաշահման տարբեր դրսևորումներից խուսափելու համար անհրաժեշտ է հստակեցնել, որ ծնողական իրավունքները սահմանափակված ծնողն ունի երեխայի հետ կապ ունենալու արգելք, որը կարող է վիճարկել դատական կարգով: Հաշվի առնելով երեխայի կարծիքը և լավագույն շահը՝ դատարանը կարող է մերժել հայցի բավարարումը՝ արգելելով ծնողական իրավունքները սահմանափակված ծնողի շփումը երեխայի հետ:

Օրենսդրորեն ընդլայնվելու են այն հանցագործությունները, որոնց համար դատվածության առկայությունը կամ հետապնդումը խոչընդոտելու են որդեգրմանը կամ խնամատարությանը: Ավելին շեշտվելու է, որ եթե անձը դատապարտվել է մարդու կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործության՝ անկախ դատվածությունը հանված կամ մարված

լինելու հանգամանքից, նա չի կարողանա հանդիսանալ որդեգրող կամ խնամատար ծնող:

Բացի այդ, դատվածություն չունեցող անձի կողմից երեխա որդեգրելու գործընթացը պետք է դադարեցվի, եթե մինչև որդեգրման մասին վճռի կայացումը կամ խնամատարության պայմանագրի կնքումը վերջինիս նկատմամբ հարուցվում է քրեական հետապնդում: Քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո որդեգրել ցանկացող անձի կամ խնամատար ծնողի ընտրությունը, հաշվառումը, որակավորումը և վերապատրաստումն իրականացվում է ընդհանուր կարգով:

Երեխայի իրավունքների իրացման և պաշտպանության առնչությամբ ՀՀ-ում դեռ ստեղծված չեն արդյունավետ մեխանիզմներ, ինչից ելնելով նոր նախագծված «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքը բովանդակում է համապատասխան լիազորող նորմեր՝ ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և այլ պետական լիազոր մարմինների հրամանների ընդունման համար:

Առանձնահատուկ ընդգծման ենթակա է այն հանգամանքը, որ 2024 թվականի սեպտեմբերի 3-ին և 4-ին Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի երեխայի իրավունքների պաշտպանության կոմիտեին ներկայացվեց երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի շրջանակներում երկրի ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցները: ՄԱԿ-ի երեխայի իրավունքների պաշտպանության թվով 2818-րդ և 2819-րդ նիստերի ընթացքում դիտարկելով երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված զեկույցները՝ սույն թվականի սեպտեմբերի 13-ին ընդունել է եզրափակիչ դիտարկումներ: Կոմիտեն մատնանշել է մի շարք խնդիրներ, որոնք արդեն իսկ ամրագրվել էին սույն օրենքների նախագծերի փաթեթում: Միաժամանակ, արձանագրելով սույն նախագծերի փաթեթի խիստ կարևոր բնույթը, Կոմիտեի կողմից ընդգծվել է փաթեթի արագ ընդունման

անհրաժեշտությունը: Ոչ պակաս ուշադրության արժանի է նաև այն, որ Կոմիտեի կողմից նշված մի շարք դիտարկումների հնարավոր կլինի արձագանքել միայն սույն օրենսդրական փաթեթի ընդունումից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման և կիրարկման արդյունքում:

Ամփոփելով, պարզ է դառնում, որ ներկա իրավիճակի մարտահրավերն է ներդնել ջանքեր երեխայի պաշտպանության գործընթացում պետության պոզիտիվ պարտավորության կատարման համար անհրաժեշտ գործիքակազմ, որին և ուղղված է ներկայացվող օրենսդրական նախագծերի փաթեթը:

2. <u>Կարգավորման նպատակը և բնույթը</u>

Նախագծերով ներկայացվել են մի շարք կարգավորումներ, որոնց միջոցով կլրացվեն վերը նշված և այլ օրենսդրական բացերը, կերաշխավորվի միջազգային պայմանագրերի նախատեսված նորմերի կիրարկումը ՀՀ-ում, կհստակեցվի տարբեր մարմինների միջև գործառույթների բաշխումը, ինչպես նաև օրենսդրորեն կամրագրվեն տարբեր մարմինների և կազմակերպությունների կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները:

Մասնավորապես, Նախագծերի փաթեթով.

1. Ամրագրվել է փաստացի խնամակալ և հոգաբարձուի վերաբերյալ դրույթը, որը ժամանակավոր այլընտրանքային խնամքի ձև է՝ ուղղված երեխային լրացուցիչ տրավմայի չենթարկելուն այն դեպքերում, երբ կա մերձավոր ազգական, ով պատրաստակամ է ստանձնել երեխայի խնամքը հրատապ դեպքերում, երբ երեխան մնում է առանց ծնողական խնամքի, սակայն այլընտրանքային խնամքի կազմակերպման ֆորմալ գործընթացը դեռևս իրականացված չէ: Այսպիսով, մինչև խնամակալության և հոգաբարձության փաստաթղթավորումը, առանց ծնողական խնամքի մնացած և այլընտրանքային խնամքի կարիք ունեցող այլ երեխաների նկատմամբ կարող է կիրառվել փաստացի խնամակալություն կամ

հոգաբարձություն: Փաստացի խնամակալ կամ հոգաբարձու կարող է հանդիսանալ երեխայի մերձավոր ազգականը, բացառությամբ գտնված (ընկեցիկ) երեխաների, ում նկատմամբ փաստացի խնամակալ կամ հոգաբարձուի երեխայի հայտնաբերման վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը: Սույն կարգավորումը հնարավորություն կտա բացառել առանց որևէ հիմքի երեխայի խնամքի կազմակերպումը, հստակ տեղեկատվության տիրապետել անգամ այն դեպքերում, երբ երեխայի խնամքն այդ ընտանիքում կազմակերպվելու է շատ կարճ ժամանակով:

2. Ազգային օրենսդրությունը համապատասխանեցվել է միջազգային օրենսդրությանը՝ իրականացնելով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները (այդ թվում՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայից, Երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտարկումներից, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայից բխող պարտավորությունները):
3. Ամրագրվել է երեխայի լավագույն շահերի պարտադիր ապահովումը նրան վերաբերող հարցերում, ներառյալ՝ որդեգրման ու խնամատարության դեպքում, և նախատեսվել են դրա կառուցակարգերը:
4. Հստակեցվել են երեխայի պաշտպանության համակարգում խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ համայնքի ղեկավարների, տարածքային կառավարման մարմինների և լիազոր մարմնի լիազորությունները և երեխայի պաշտպանության ընթացակարգերը:
5. Ամրագրվել են համայնքում մասնագիտացված սոցիալական աշխատողների հստակ գործառույթները երեխայի պաշտպանության ոլորտում՝ ապահովելով խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ համայնքի ղեկավարների գործունեությունը մասնագիտական հիմքերի վրա:

6. Նախատեսվել է ստեղծել երեխայի պաշտպանության բազմամասնագիտական խորհուրդներ մարզպետի աշխատակազմի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից երեխայի պաշտպանության գործառույթների իրականացմանն աջակցելու համար: Երեխայի պաշտպանության բազմամասնագիտական խորհրդի գործունեությունը, ներառյալ՝ նախկինում համանման հանձնաժողովների գործունեության հետ կապված բացերի լուծումները, կարգավորվելու են ենթաօրենսդրական ակտով:
7. Հստակեցվել է Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի դերը և սահմանվել են քարտուղարության գործառույթները:
8. Սահմանվել են երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում մի շարք կարևոր հասկացություններ, այն է՝ բուլինգ, ֆիզիկական (մարմնական) պատիժ, շահագործում, այդ թվում՝ սեռական շահագործում և այլ հասկացություններ:
9. Սահմանվել է բռնության կամ դրա ռիսկի դեպքում պարտադիր ահազանգման պարտականությունը, ինչը հետագա կարգավորումներ սահմանելու հնարավորություն կընձեռի:
10. Ի կատարումն Լանզարոտեի կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետից բխող պարտավորությունների, և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2020թ. -ի հուլիսի 31-ի N 885-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը՝

ա. «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով միջգերատեսչական Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի վրա է դրվել երեխայի շահագործումից և երեխայի նկատմամբ բռնություններից (ներառյալ՝ սեռական) երեխաների պաշտպանության, դրանց կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման

մարմինների ու կազմակերպությունների միջև համագործակցության ապահովումն ու համակարգումը,

բ. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխություն է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ հոդվածի առաջին մասում, որով ամրագրվել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինների սեփական և պետության պատվիրակած լիազորությունները սահմանվում են օրենքով, իսկ «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի 47-րդ հոդվածով սահմանվել են այդ լիազորությունները, որոնց ամբողջությունն ուղղված է երեխայի իրավունքների խրախուսմանը և պաշտպանությանը: Ըստ առաջարկվող իրավակարգավորումների ֆինանսական գնահատման նախատեսվում է լրացուցիչ ռեսուրսներ ուղղել սահմանված լիազորությունների պատշաճ իրականացման համար:

11. Սահմանվել են որդեգրման դեպքում համադրման ընդհանուր դրույթներ, երկու փուլեր և այլ կարգավորումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ դրանք հետագայում առավել մանրամասնելու նպատակով:

12. Ամրագրվել է, որ ծնողական իրավունքներում սահմանափակված անձին կարելի է զրկել երեխայի հետ կապ հաստատելուց (տեսակցելուց), եթե այդ շփումն ու կապը չեն բխում երեխայի լավագույն շահից:

13. Փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտման հիմնական պատասխանատու սահմանվել է համայնքի սոցիալական աշխատողը, հետևաբար՝ նախատեսվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը՝ համապատասխան տեղեկատվությունը մուտքագրելով տեղեկատվական համակարգ, որը հասանելի է լինելու մարզպետի աշխատակազմին, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանին:

14. Ամրագրվել է լիազորող նորմ, որով կսահմանվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած, երեխաների բացահայտման առանձնահատկությունները, այդ գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունն ու երեխաների ու նրանց վերաբերյալ տեղեկատվության ուղղորդման կարգը:

15. Երեխայի որդեգրման և դրա գործընթացի գաղտնիքն արդյունավետորեն պաշտպանելու համար վերանայվել է այդ գաղտնիքը կրող անձանց շրջանակը, սահմանվել է համապատասխան տեղեկատվություն հրապարակելու արգելքը:

16. Սահմանափակվել է կենսաբանական ծնողի մասնակցությունը խնամատարության պայմանագրի կնքմանը, եթե ծնողը դատական կարգով սահմանափակվել է ծնողական իրավունքներում կամ եթե երեխան գտնվում է շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունում:

17. Սահմանվել է, որ երեխան խնամատարության չհանձնվի, եթե ակտիվորեն իրականացվում է կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման գործընթացը՝ ելնելով նրա լավագույն շահից:

18. Հստակեցվել են որդեգրման և խնամատարության նկատմամբ վերահսկողության որոշ առանձնահատկություններ:

19. Մանրամասնվել է երեխայի կարծիքը գրավոր, բանավոր կամ տեսաձայնագրությամբ ներկայացնելը և այն, որ երեխայի կարծիքը լսելիս կամ տեսաձայնագրությունը վերարտադրելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը, դատարանը կամ այլ մարմինները և կազմակերպությունները, որոնք ապահովում են սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը կամ պետք է լսեն այդ կարծիքը, ներգրավում են մանկական հոգեբան կամ սոցիալական աշխատողի: ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն

վերաբերող հարցերում: ՀՀ ընտանեկան օրենսգրքում առաջարկվող լրացումներն էլ միտված են երեխայի տարիքին ու հասունության մակարդակին համապատասխան կարծիքը հաշվի առնելիս մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի ներգարվմանը, հետևաբար այդ ընթացակարգերն արդեն կարգավորված են այլ օրենքներով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում անհարկի կրկնության կարիք չկա: Միայն տարիքային հատկանիշով առաջնորդվելը խախտում է սահմանադրական երաշխիքը, և անտեսում երեխայի զարգացման մակարդակը, այդ իսկ պատճառով և հաշվի առնելով, որ տարբեր տարիքային խմբերի երեխաներ տարբեր ձևով են զարգանում, երեխայի կարծիքը հաշվի է առնվելու հոգեբանի կամ սոցիալական աշխատողի կարծիքը հաշվի առնելով:

20 . Սահմանվել է, որ դատարանը ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում կարող է անդրադառնալ նաև այլ որոշ հարցերին (ծնողներից կամ նրանցից մեկից երեխային վերցնելու և երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելու հարցին, ծնողներից կամ նրանցից մեկից երեխային վերցնելու դեպքում երեխայի խնամակալ (հոգաբարձու) նշանակելիս նրա իրավունքների և պարտականությունների շրջանակին, ծնողներից կամ նրանցից մեկից երեխային վերցնելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու հարցին, ծնողներից կամ նրանցից մեկից երեխային վերցնելու և նրան բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու հարցին):

21. Նախատեսվել է որդեգրման ենթակա երեխաների առողջական վիճակի մասին գնահատականը տալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հրամանով ստեղծված մասնագիտական հանձնաժողովի կողմից, որի գործունեությունը, դրա կողմից երեխայի առողջական վիճակի մասին եզրակացության տրամադրման կարգը և գործառույթները հաստատվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

22. Առանձնացվել է օտարերկրյա որդեգրման առանձնահատկությունները՝ սահմանելով «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած կենտրոնական մարմնի որոշ լիազորություններ և ամրագրելով լիազորող նորմ, որով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատելու է օտարերկրյա որդեգրման այլ առանձնահատկությունները, հավատարմագրված կազմակերպությունների ընտրության, դրանց ներկայացվող պահանջների, հավատարմագրված կազմակերպությունների և դրանց հայաստանյան ներկայացուցիչների գործունեության կարգը:

23. Սահմանվել են օտարերկրյա որդեգրման կազմակերպման համար հավատարմագրված կազմակերպություններին ներկայացվող պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած կենտրոնական մարմին ներկայացվող փաստաթղթերը, այդ մարմնի կողմից կիրառվող սահմանափակումները, ինչպես նաև հավատագրման կասեցման կամ դադարեցման դեպքերը և այլ հարցեր:

24. Երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառման ժամկետը սահմանվել է 18 ամիս:

25. Վերանայվել են համայնքի ղեկավարի պատվիրակված լիազորությունները և ի թիվս մյուսների ավելացվել է այն, որ համայնքի ղեկավարն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, առաջարկվող նոր «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքով և այլ օրենքներով վերապահված պետության պատվիրակած լիազորությունները:

26. Հստակեցվել է ծնողների հրաժարման և որդեգրման համաձայնության հարաբերակցությունը՝ հատուկ շեշտելով, որ երեխայի ծնողների կամ միակ ծնողի գրավոր հրաժարումը համարվում է համաձայնություն երեխայի որդեգրման վերաբերյալ՝ գրավոր հրաժարումից առնվազն 6 ամիս անց:

Որդեգրման հնարավորության մասին ծնողները կամ միակ ծնողը նախազգուշացվում է գրավոր հրաժարումը ներկայացնելու պահին: Վեցամսյա ժամկետը երբեմն անհրաժեշտ է լինում ծնողներին մտափոխվելու և կենսաբանական ընտանիքի հետ երեխայի վերամիավորման համար, մասնավորապես, երբ խոսքը գնում է հաշմանդամություն ունեցող երեխաների վերադարձի մասին, ծնողավարման հմտություններ չունեցող ծնողների դեպքում և այլն:

27. Սահմանվել է ալիմենտի վճարման անկանխիկ ձևով ընդունման կարգավորումը:

28. Իրավական որոշակիություն է մտցվել Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում:

29. Ապահովվել է կիրառվող եզրույթների միասնականությունը, վերացվել են տեխնիկական վրիպակները և այլն:

Կարևոր է ընդգծել, որ Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին օրենքի նախագծի տարբեր հոդվածներում կիրառվում է «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց կազմակերպությունների» ձևակերպումը, քանի որ ոչ միայն պետությունը և տեղական ինքնակառավարման մարմինները, այլ նաև դրանց առանձին կազմակերպությունները՝ ՊՈԱԿ-ները և ՀՈԱԿ-ները, ունեն դերակատարում երեխայի իրավունքների պաշտպանության ու երեխայի լավագույն շահով առաջնորդվելու պարտադիր պայման: Մասնավորապես, ցանկացած ՊՈԱԿ-ի կամ ՀՈԱԿ-ի այն աշխատողները, որոնք առնչվում են երեխաների հետ, երեխայի հետ վարվեցողության ընթացքում պետք է լինեն երեխայակենտրոն:

ԵԻՊ օրենքի նախագծում ներկայացվող կարգավորումը նոր լիազորություն չէ ՊՈԱԿ-ների կամ ՀՈԱԿ-ների աշխատողների համար, այլ նրանց լիազորությունների իրականացման ընթացքում երեխայի իրավունքների չանտեսելու, չվնասելու, ինչպես նաև երեխայի լավագույն շահով առաջնորդվելու պարտադիր պայման են: Նախագծով չի առաջարկվում նոր ՀՈԱԿ կամ ՊՈԱԿ

ստեղծել, այլ այն բոլոր կազմակերպությունները, որոնք առնչվում են երեխաների հետ, եօպետք է իրենց գործառույթների ժամանակ գործեն՝ երեխայի զարգացող կարիքներին ու իրավունքներին համահունչ: Օրինակ, կոմունալ-կենցաղային ծառայություններ մատուցող կազմակերպության աշխատողը երեխայի հետ առնչվելիս պետք է հարցեր տա երեխայի տարիքին համապատասխան, ծնողների բացակայությամբ չկատարի այնպիսի գործողություններ, որոնց համար չափահաս անձանց մասնակցությունը պարտադիր է և այլն: Ավելին, ՏԻՄ օրենքում այս առնչությամբ որևէ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ այդ օրենքի տարբեր հոդվածներում՝ ըստ բնագավառների, նշված է, որ համայնքի ղեկավարը կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը, իսկ այդ կազմակերպությունների կանոնադրությունները հաստատվում են համայնքի ավագանու կողմից: Հետևաբար, համայնքի ավագանին նոր ընդունվող կամ առկա կանոնադրություններում լոկ կարող է շեշտել երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը, և սակայն անգամ այն դեպքում, եթե դա չնշի կանոնադրության մեջ, դա օրեենքի պահանջ է, իսկ համայնքային ծառայողների պաշտոնի անձնագրերում շեշտվում է օրենքներով առաջնորդվելու պարտականությունը: Համանման կարգավորում առկա է նաև քաղաքացիական ծառայողների համար:

Նախագծերն ընդունելուց հետո երկու տարվա ընթացքում ընդունվելու են Հայաստանի Հանրապետության կառավարության այն որոշումները և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանները, որոնք բխում են սույն Նախագծերից:

Նախագծերով նախատեսվում է ներկայացնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որի միջոցով կկարգավորվի որդեգրման

գործընթացի դատական փուլում երեխաների մասնակցությունը՝ երեխայակենտրոն և երեխայազգայուն դատավարության ձևաչափով:

Վերը նշված համատեքստում Նախագծերով նախատեսվում են հետևյալ կարգավորումները՝

1. Երեխայի մասնակցությունը որդեգրման դատավարությանը չի հանդիսանալու պարտադիր, այլ իրականացվելու է ըստ անհրաժեշտության՝ ելնելով երեխայի լավագույն շահից:

2. Ամրագրել երեխայի լավագույն շահերի պարտադիր ապահովումը որդեգրման դատավարության ընթացքում, այդ համատեքստում սահմանվել է 3 ամսյա ընթացքում դատավարության ժամկետի ամրագրումը, քանի որ նման մոտեցումը բխում է երեխայի՝ ընտանեկան միջավայրում դաստիարակվելու, միջամտության օպերատիվությունն ապահովելու և փաստացի երեխային առաջնահերթություն տալու պահանջով:

3. Շեշտվում է, որ անկախ որդեգրման գործով երեխայի անմիջական մասնակցությունից՝ որդեգրվող երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, դատարանը հաշվի է առնում երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:

4. Հստակեցվում են երեխայի կարծիքը ներկայացվելու գրավոր, բանավոր կամ տեսաձայնագրությամբ ձևաչափերը՝ նրա մասնակցությամբ ցանկացած գործողության դեպքում:

5. Երեխայի կարծիքը վերարտադրելիս կամ լսելիս դատարանը ներգրավում է մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի: Երեխայի գրավոր կարծիքը ներկայացվում է մանկական հոգեբանի կամ սոցիալական աշխատողի գրավոր կարծիքի հետ միասին:

6. Իրավական որոշակիություն մտցնել օրենսգրքում, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխությունների և լրացումների մասին» նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով առաջարկվող փոփոխությունը միտված է կրկնությունից խուսափելուն և այլն:

7. Բացի այդ, կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ են իրականացվել երեխայի և սոցիալական պաշտպանության ոլորտում, ինչը հանգեցրել է նոր դերակատարների առաջացման, նրանց գործառույթների վերանայման, համագործակցության անհրաժեշտության և այլ հարցերի: Օրինակ, ստեղծվել է միասնական սոցիալական ծառայությունը և դրա տարածքային կենտրոնները, որոնք իրականացնելու են ընտանիքի սոցիալական գնահատումը, որը հաշվի է առնվելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելիս, իսկ այդ հարցին անդրադարձ Հայաստանի Հանրապետության գործող ընտանեկան օրենսդրությունը չի իրականացնում:

8. Իրականացվելու են նաև համապատասխան փոփոխություններ և լրացումներ Հայաստանի Հանրապետության կառավարության գործող որոշումներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններում:

Հաշվի առնելով համայնքում երեխայի պաշտպանության գործառույթների իրականացման համար մասնագիտական ռեսուրսի ապահովումն ու համայնքի սոցիալական աշխատողների դերի ընդլայնումը՝ պետք է պատասխանատվություն սահմանել համայնքի սոցիալական աշխատողի համար, ով աջակցելու է մարզպետի աշխատակազմին, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանին որդեգրման և խնամատարության նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելիս, այն դեպքում, երբ ներկայումս նրանք որևէ առնչություն այդ գործընթացին չունեն՝ չնայած հանդիսանում են այդ ընտանիքի հետ մշտական աշխատանքներ իրականացնող մասնագետներ:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը չի սահմանում այն, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, և մինչև նրանց կարգավիճակի ճանաչումն անհրաժեշտ է իրականացնել տարաբնույթ գործողություններ: Հետևաբար, նրանք պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնեն այդ երեխաների սկզբնական հաշվառումը և, ելնելով

ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքից՝ մարզպետի աշխատակազմ, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարան ներկայացնեն այդ երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման վերաբերյալ նախնական եզրակացություն:

Գործող օրենսդրությամբ սահմանված է, որ միայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար է կազմվում անհատական սոցիալական ծրագիր, այն դեպքում, երբ դրա անհրաժեշտությունն առկա է նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բոլոր երեխաների առնչությամբ, հետևաբար պահպանելով համապատասխան լիազորող նորմն այն ընդլայնվելու է, որպեսզի երեխայի պաշտպանության պլանը կիրառելի լինի նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բոլոր երեխաների նկատմամբ:

Առանձնահատուկ շեշտադրվում է ծնողական իրավունքների սահմանափակման կամ զրկման հայցը դատարան ներկայացնելու ապահովման մարզպետի աշխատակազմի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի պարտականությունը բոլոր այն դեպքերի համար, երբ համայնքի կամ իրավասու այլ մարմնի կամ անձի կողմից դա չի կատարվել ավելի վաղ: Խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից ծնողական իրավունքների սահմանափակման կամ զրկման հայցը դատարան ներկայացնելու պրակտիկան ցույց է տվել իր անարդյունավետությունը և համայնքի սահմաններում ոչ թե մասնագիտական, այլ միջանձնային ազդեցությունների հետևանքով չիրականացվելը, ինչը խոչընդոտում է երեխայի՝ ընտանիքում խնամք և դաստիարակություն ստանալու իրավունքի իրացմանը: Նախագծով խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից ծնողական իրավունքների սահմանափակման կամ զրկման հայցը դատարան ներկայացնելու կարգավորումը չի վերանում, սակայն գործառույթի իրականացման ապահովման պատասխանատվությունը դրվում է նաև մարզպետի աշխատակազմի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի վրա:

Բացի այդ, գործող օրենսդրությամբ ծնողական իրավունքից զրկման համար հիմք են այն դեպքերը, երբ ծնողի մոտ առկա է քրոնիկ ալկոհոլամոլությամբ,

թմրամոլությամբ կամ թունամոլությամբ կամ քրոնիկ հոգեկան հիվանդություններով, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նման կարգավորումը հնարավորություն չի ընձեռում անհատական մոտեցում դրսևորել և խարանում է քրոնիկ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ իսկ պատճառով Նախագծերով նախատեսվում է հանել այդ հիմքերը դիտել որպես ծնողական իրավունքի սահմանափակման կամ զրկման հիմք:

Սահմանափակվում է կենսաբանական ծնողի մասնակցությունը խնամատարության պայմանագրի կնքման գործընթացում, և ի թիվս առկա սահմանափակումների ավելացվում է, որ պայմանգրի կողմ չի հանդիսանում այն ծնողը, ով դատական կարգով սահմանափակվել է ծնողական իրավունքներում, կամ եթե երեխան գտնվում է շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունում:

3. <u>Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</u>

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի փորձագետների մասնակցությամբ:

4. <u>Ակնկալվող արդյունքը</u>

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է ընդունել «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» նոր օրենքը և Հայաստանի Հանրապետության ընտանեկան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին», ««Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, բարելավել երեխայի

մասնակցությամբ պրակտիկան, որի արդյունքում առավել կապահովվեն երեխաների, մասնավորապես՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքները, արդյունավետ պայքար կիրականացվի երեխայի իրավունքների խախտումների դեմ, կհստակեցվեն երեխայի որդեգրման և խնամատարության խնդրահարույց հարցերը, ինչպես նաև կկարգավորվեն տարաձայնություններ առաջացնող եզրույթներն ու ձևակերպումները, կապահովվի պետության լիարժեք պարտականությունը երեխայի պաշտպանության տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» առաջարկվող նոր օրենքը չծանրաբեռնելու, որոշ ընթացակարգային, գործառութային և տեխնիկական հարցեր սահմանելու համար նախագծերում ներկայացվում են համապատասխան լիազորող նորմեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան ակտերի ընդունման առնչությամբ, իսկ որոշ փոփոխություններ կիրականացվեն արդեն գործող ենթաօրենսդրական ակտերում:

Սույն Նախագծերի ընդունմամբ այլ օրենքներում լրացումների կամ փոփոխությունների կարիք չի առաջանա:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի Հավելված 1-ի 12.1-րդ և 12.2-րդ կետերի պահանջներից, որտեղ հստակ սահմանված է սույն նախագծերը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացնելու միջոցառում՝ ապահովելով երեխայի լավագույն շահերի հաշվի առնելը վերջիններիս վերաբերող գործընթացներում, ինչպես նաև երեխաների

իրավունքների պաշտպանության ոլորտի մասնագետների հստակ լիազորությունները սահմանումը: Բացի այդ, նախագծերը բխում են նաև «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050» ռազմավարական փաստաթղթի Մեգանպատակ 3-ից՝ մասնավորապես երեխայի պաշտպանության համակարգի բարեփոխման արդյունքում քաղաքացիների համար առավել թափանցիկ կլինեն երեխայի խնամքին, պաշտպանությանն առնչվող գործընթացները, դրանց նկատմամբ վերահսկողության գործընթացը կլինի հստակ ամրագրված, իսկ նոր ներդրված հաստիքների միջոցով երեխայի պաշտպանության համայնքային մակարդակում կապահովվի պատասխանատու և արհեստավարժ մասնագիտական ներուժ: Նախագծերի փաթեթը բխում է նաև նույն ռազմավարական փաստաթղթի Մեգանպատակ 4-ից, որի արդյունքում կապահովվի պետական ամբողջական և լիարժեք հոգածություն երեխաների նկատմամբ:

6. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Ստորև ներկայացվում է սույն նախագծերի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում 2027 թվականից սկսած եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազման, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին տեղեկատվությունը:2027 թվականից լրացուցիչ միջոցների պահանջը կարող է առաջանալ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորություն պատվիրակելու, անհրաժեշտ մասնագետներին վերապատրաստելու, համապատասխան հաստիքները նախատեսելու և նախագծերով նախատեսված այլ կարգավորումների առնչությամբ:

Հաշվի առնելով միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների ստեղծման և համալրման գործընթացը և դրանից քաղած դասերը, ինչպես նաև կանխատեսելով հնարավոր բարդություններ կարճ

ժամանակահատվածում բոլոր համայնքներում ապահովել անհրաժեշտ թվով սոցիալական աշխատողներ, առաջարկում ենք իրականացնել բարեփոխման աստիճանական ներդրում: Օրենքով նախատեսվել է նաև 24 ամիս նախագծերից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման, համապատասխանեցման և ընդունման համար: Նախատեսվում է նաև երեխայի պաշտպանության համակարգի ներդրումը 2028 թվականին իրականացնել 1 մարզում՝ առանց «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի նախագծի 47-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետով նախատեսվող համայնքի մակարդակում հերթափոխով աշխատանքի միջոցով 24-ժամյա հասանելիության ապահովման: Մեկ մարզում փորձնական ներդրման, խնդիրների բացահայտման ու համապատասխան ճշգրտումների համա նախատեսվում է մեկ տարի ժամկետ, սակայն դրա ամբողջական իրականացման համար նախատեղվել է նաև համապատասխան թվով մասնագետների վերապատրաստումն ու տեխնիկական ապահովումը սկսել մեկ տարի շուտ՝ 2027 թվականին:

2029 թվականից նախատեսվում է երեխայի պաշտպանության համակարգի ներդրումը Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ դարձյալ առանց համայնքի մակարդակում հերթափոխով աշխատանքի միջոցով 24-ժամյա հասանելիության ապահովման :

2030 թվականից նախատեսվում է իրականացնել համայնքի մակարդակում հերթափոխով աշխատանքի միջոցով 24-ժամյա հասանելիության համար անհրաժեշտ փոփոխությունների ներդրումը փորձնական 1 մարզում:

Համակարգի ներդրման ողջ ընթացքում նախատեսվում է իրականացնել դրա մշտադիտարկում, համապատասխան տվյալների հավաքագրում և վիճակագրության վարում, որոնք կօգտագործվեն ընթացիկ շտկումների համար, ինչպես նաև 2030 թվականին 24-ժամյա հասանելիության ներդրումից հետո պլանավորվող համակարգի գնահատման համար: Գնահատումը կներառի նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա համակարգի ազդեցության վերլուծություն, այդ թվում՝ 24-ժամյա հասանելիության ամբողջական

ապահովման ներառմամբ, որի հիման վրա կներկայացվեն լրացուցիչ առաջարկություններ:

Հիմք ընդունելով վերը նշված օրենքների նախագծերի ընդունմամբ, փոփոխմամբ և լրամշակմամբ առաջարկվող իրավակարգավորումները՝ գնահատվել է դրանցից բխող լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը հետևյալ ուղղություններով.

ա) առաջարկվող նախագծերը սահմանում են տարածքային կառավարման պետական մարմնի կողմից երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում հստակ լիազորություններ, որոնք իրականացվելու են երեխայի պաշտպանության ոլորտում մասնագիտացված սոցիալական աշխատողի միջոցով: Հետևապես, անհրաժեշտ է վերանայել տարածքային կառավարման մարմինների հաստիքացուցակները, ստեղծել կամ համալրել առկա մասնագիտացված ստորաբաժանումը և ապահովել երեխայի պաշտպանության ոլորտում մասնագիտացած սոցիալական աշխատող տարածքային կառավարման մարմիններում՝ սահմանված լիազորությունների արդյունավետ իրականացման համար: Այդպիսի հաստիք նախատեսվում է ստեղծել նաև Երևանի քաղաքապետարանում: Սոցիալական աշխատողների վարձատրության միջին չափը գնահատվել է ամսական 245,000 դրամ՝ հիմք ընդունելով որոշ համայնքներում առկա համայնքային սոցիալական աշխատողների համար սահմանված վարձատրության փաստացի չափը և միասնական սոցիալական ծառայությունների աշխատակիցների վարձատրության միջին չափը (256,623 դրամ):

բ) առաջարկվող նախագծերն ավելացնում են նաև համայնքի ղեկավարի դերը երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում՝ հստակ սահմանելով լիազորություններ, որոնք իրականացվելու են երեխայի պաշտպանության ոլորտում սոցիալական աշխատողի միջոցով կամ նրանց մասնագիտական եզրակացության հիման վրա: Հետևապես, անհրաժեշտ է վերանայել համայնքների հաստիքացուցակները, ստեղծել կամ համալրել առկա մասնագիտացված հաստիքները և ավելացնել համայնքի սոցիալական

աշխատողների թվաքանակը՝ սահմանված լիազորությունների արդյունավետ իրականացման համար՝ հաշվի առնելով այդ լիազորությունների մեծամասամբ պատվիրակված լինելու հանգամանքը: Աշխատավարձի համար կիրառվել է նույն հաշվարկը. համայնքի սոցիալական աշխատողների վարձատրության միջին չափը գնահատվել է ամսական 245,000 դրամ՝ հիմք ընդունելով համայնքներում սահմանված նմանատիպ պաշտոնների համար վարձատրության փաստացի չափը և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների նմանատիպ աշխատակիցների վարձատրության չափը :

Առաջին փուլում, առանց 24-ժամյա հասանելիության ապահովման, համայնքում երեխայի պաշտպանության ոլորտում մասնագիտացված սոցիալական աշխատանքի համար անհրաժեշտ մասնագիտացված սոցիալական աշխատողների թիվը հաշվարկվել է յուրաքանչյուր 5,000 երեխայի համար առնվազն 1 սոցիալական աշխատող հաշվարկով, բայց ոչ պակաս քան 1 մասնագիտացված սոցիալական աշխատող յուրաքանչյուր համայնքում: Այս հաշվարկի համար հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ տվյալ աշխատակիցը պետք է իրականացնի կանխարգելիչ աշխատանքներ, այլ ոչ միայն արձագանքի հայտնաբերված կամ հաղորդված դեպքերին:

Ա և Բ կետերի հաշվարկով բոլոր համայնքներում և տարածքային կառավարման մարմիններում միասին կլինեն 151 մասնագիտացված սոցիալական աշխատողներ:

Երկրորդ փուլում նախատեսվում է ներդնել համայնքի մակարդակում հերթափոխով աշխատանքի միջոցով 24-ժամյա հասանելիության ապահովումը, որն անհրաժեշտ փոփոխություն է երեխայի պաշտպանության արդյունավետ իրականացման համար, մասնավորապես՝ հրատապ դեպքերին երեխայակենտրոն արձագանք ապահովելու նպատակով: Ներկայիս օրենսդրության համաձայն համայնքներում 24-ժամյա հասանելիության ապահովման համար յուրաքանչյուր համայնքում անհրաժեշտ է ունենալ առնվազն 5 աշխատակիցներ՝ հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4 մասը, որի համաձայն՝ աշխատաժամանակի առավելագույն

տևողությունը չի կարող գերազանցել շաբաթական 48 ժամը, ինչպես նաև նույն օրենսգրքի ամենամյա արձակուրդի և այլ պայմանների մասին կարգավորումները, ինչպես նաև ՀՀ տարածքային ինքնակառավարման և հանրային ծառայության մասին օրենքները: Այս հաշվարկի հիման վրա ՀՀ 70 համայնքներում և Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում անհրաժեշտ կլինի ընդհանուր առմամբ ապահովել մասնագիտացված սոցիալական աշխատողների 400 հաստիք: Սակայն սա ծախսարդյունավետ չէ հատկապես փոքր համայնքների դեպքում, ինչպես նաև կարող է առաջացնել մարդկային ռեսուրսների խնդիրներ: Ուստի սկզբնական փուլում կիրականացվի մեկ մարզում 24-ժամյա հասանելիության ապահովման փրձարկում մեկ կամ մի քանի մեխանիզմներով, ապա նաև այս փորձարկման և ամբողջ համակարգի ներդրման ամբողջական գնահատում, այդ թվում՝ պետական բյուջեի վրա դրա ազդեցության վերագնահատում:

Համայնքներում մասնագիտացված սոցիալական աշխատանքի ծառայության 24-ժամյա հասանելիության պարագայում գիշերային աշխատանքի համար հավելավճարի անհրաժեշտություն կառաջանա: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝ գիշերային աշխատանքի համար վճարվում է հավելում՝ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով: Գիշերային աշխատանքային ժամերը մեկ ամսվա համար հաշվարկվել են միջինում 240 ժամ:

գ) Հաշվարկվել է նաև յուրաքանչյուր նոր աշխատակցի տեխնիկական ապահովման ծախսը՝ հաշվի առնելով աշխատանքային տարածքի, տեղեկատվական համակարգ մուտքի, դեպքերի գնահատման համար պլանշետի, ինչպես նաև հեռախոսով հասանելի լինելու անհրաժեշտությունը, ուստի գնահատվել են հետևյալ պարագաների գները. գրասեղան, գրասենյակային աթոռ, համակարգիչ, հեռախոս և պլանշետ):

ե) Լիազորությունների իրականացման համար անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ միջոցներ նախատեսել երեխայի պաշտպանության դեպքերի մշտադիտարկման, խնամակալության, հոգաբարձության, խնամատարության և որդեգրման մշտադիտարկման համար անհրաժեշտ

տունայցերի համար, որոնց քանակը կախված է դեպքերի թվից: Լիարժեք վիճակագրության բացակայության պայմաններում տունայցերի ծախսի հաշվարկի համար ըստ մարզերի դիտարկվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը, ըստ հեռավորությունների միջին թիվը և տարեկան միջինում 3-5 այց: Այս հաշվարկը կիրառման հիման վրա հետագայում վերանայման անհրաժեշտություն կառաջանա:

զ) Լրացուցիչ ծախսեր կպահանջեն նաև երեխաներին այլընտրանքային խնամքի կազմակերպման, վերամիավորման և այլընտրանքային խնամքի ձևի փոփոխության ժամանակ տեղափոխումը, ինչպես նաև հրատապ դեպքերի ահազանգերի հիման վրա այցերի իրականացումը: Հրատապ դեպքերին արձագանքելու և երեխաներին ընտանիքից այլընտրանքային խնամք և ընտանիք տեղափոխելու համար յուրաքանչյուր համայնքում դիտարկվել է տեղափոխման պայմանագրային ծառայություն: Հրատապ արձագանքի ժամանակ երեխաներին ընտանիքից այլընտրանքային խնամք և ընտանիք տեղափոխելու համար դեպքերի թիվը գնահատվել է ամսական 1-20 դեպք, իսկ յուրաքանչյուր դեպքի համար, որպես լրացուցիչ ծախս, գնահատվել է հանրապետության միջինում 10,000 դրամը, որը ներառում է վարորդի վարձատրությունը և ճանապարհածախսը, սակայն նախատեսվում է այս ծախսը փոխհատուցել ըստ կատարման փաստի, ոչ թե միջինացված՝ հաշվի առնելով ծառայությունների անհավասար բաշխումն ու հասանելիությունը տարբեր մարզերում:

է) Հեռախոսի և սպառվող պարագաների ծախսերը գնահատվել են մեկ համայնքի սոցիալական աշխատողի հաշվով տարեկան 35,000 դրամ:

ը) Լրացուցիչ ծախս կպահանջի նաև սոցիալական աշխատողների վկայագրումը և ընթացիկ վերապատրաստումը, որոնց հաշվարկը կատարվել է այլ նմանատիպ գործողությունների, մանավորապես՝ միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատողներով համալրելու ընթացքում կազմակերպված դասընթացների համար կատարված ծախսերը գնահատելու հիմքով, համաձայն որի մեկ աշխատակցի ներգրավման համար նախնական վերապատրաստման ու վկայագրման ծախսը գնահատված է մեկ տարվա

ընթացքում 400,000 դրամ, իսկ ընթացիկ տարեկան վերապատրաստման ծախսը՝ 150,000 դրամ:

Պետք է հաշվի առնել, որ առաջարկվող փաթեթով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների հիմնական մասը սահմանվում է որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն, հետևաբար, այդ լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից համայնքների բյուջեներին պետք է փոխանցվեն համապատասխան ֆինանսական միջոցներ: Սա հնարավորություն կտա, ինչպես ապահովել մասնագիտական ներուժի ներգրավումը համապատասխան աշխատանքի նկարագրի հիմքով, այնպես էլ այդ աշխատանքների հետագա վերահսկողությունն ու մոնիթորինգը:

Այսպիսով, Հավելված 1-ում ներառված աղյուսակը ներկայացնում է վերոնշյալ գնահատված ծախսերի հաշվարկը տարեց տարի աստիճանական ներդրման պարագայում: Համաձայն այդ հաշվարկների 2027 թվականին անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցները կկազմեն 15,600,000 դրամ առանց մասնագիտացված սոցիալական աշխտանքի 24-ժամյա հասանելիության համակարգի 1 մարզում փորձնական ներդրմանը նախապատրաստվելու, այն է՝ վերապատրաստումների և տեխնիկական ապահովման համար: 2028 թվականից կսկսվի մեկ մարզում փորձարկումը (աշխատակիցների համալրմամբ), ինչպես նաև կիրականացվեն նախապատրաստական ծախսերը բոլոր մարզերում ներդրման համար, ինչի արդյունքում լրացուցիչ ֆինանսական միջոցները կկազմեն 211,168,146 դրամ: 2029 թվականից առանց 24-ժամյա հասանելիության համակարգը կներդրվի բոլոր մազրերում և քաղաք Երևանում, միաժամանակ կիրականացվեն 24-ժամյա հասանելիության փորձարկման համար նախապատրաստական ծախսերը, ինչի արդյունքում լրացուցիչ ֆինանսական միջոցները կկազմեն 555,494,610 դրամ: 2030 թվականին կիրականացվի 24-ժամյա հասանելիության փորձարկումը մեկ մարզում, միաժամանակ բոլոր մարզերում համակարգը կշարունակի գործառնել առանց 24-ժամյա հասանելիության, սակայն բնականոն հունով, ինչի արդյունքում լրացուցիչ ֆինանսական ծախսերը կկազմեն 544,309,727 դրամ:

2030 թվականին երեխայի պաշտպանության մասնագիտացված սոցիալական աշխատանքի 24-ժամյա հասանելիության ապահովման համար առաջացող ծախսերի հաշվարկը մեկ մարզում փորձարկելու համար իրականացվել է ներկայիս օրենսդրական հիմքերն ու մեխանիզմները հաշվի առնելով, սակայն փորձարկումը հնարավորություն կտա ուսումնասիրել տարբերակներ դրա առավել ամբողջական և ծախսարդյունավետ ներդման համար, ինչի համար կիրականացվի բարեփոխման փորձարկման գնահատում, որը կներառի նաև ֆինանսական ազդեցության վերլուծություն և համապատասխան վերահաշվարկ, ինչի հիմքով կներկայացվի լրացուցիչ առաջարկություն:

Հավելված 1. Համայնքներում և մարզերում մասնագիտացված սոցիալական աշխատողների և նրանց հետ կապված ծախսերի ամփոփ հաշվարկ

Տարե թիվ	Աստիճանական ներդրման փուլի նկարագրություն	Ընդամենը տեխնիկական ապահովում[25]	Ընդամենը տարեկան վերապատրաստման ծախս	Ընդամենը տարեկան աշխատավարձ [26]	Ընդամենը տարեկան տրանսպոր-տային ծախս[27]	Ընդամենը տարեկան հեռախոսակա-պի և սպառվող պարագաների ծախս	Ընդհանուր տարեկան ծախս
2027	Վերապատրաստում ու տեխնիկական ապահովում 1 մարզի փորձարկման համար	10,400,000	5,200,000	-	-	-	**15,600,000**
2028	Մեկ մարզում ՍԱ համալրում - փորձարկում, մնացած մարզերի համար վերապտրաստում և տեխնիկական ապահովում (1 մարզ, 5 համայնք, 13 ՍԱ)	110,400,000	56,966,306	41,405,000	1,941,840	455,000	**211,168,146**
2029	Բոլոր մարզերում ՍԱ համալրում, մեկ մարզում 24-ժամյա հասանելիության ապահովման համար նոր ՍԱ վերապատրաստում և տեխնիկական ապահովում (10 մարզ + ք. Երևան, 70 համայնք + 10 վարչական շրջան, 151 ՍԱ)	20,000,000	32,581,115	479,472,337	18,156,158	5,285,000	**555,494,610**
2030	Մեկ մարզում 24-ժամյա հասանելիության փորձարկում աշխատակիցների համալրմամբ, մնացած մարզերում առանց ժամյա հասանելիության աշխատանք (24-ժամյա-ի փորձարկում՝ 1 մարզ, 5 համայնք, 13 ՍԱ, Բնականոն աշխատանք առանց 24-ժամ՝ 10 մարզ + ք. Երևան, 70 համայնք + 10 վարչական շրջան, 151 ՍԱ)		-	518,217,337	20,387,390	5,705,000	**544,309,727**

[25] Ծախսը նախատեսվում է իրականացնել համակարգի ներդրման նախորդ տարվա ընթացքում:
[26] Աշխատավարձի հաշվարկն ընդգրկում է արձակուրդային, ինչպես նաև գիշերային աշխատանքի համար հավելավճարները, որտեղ կիրառելի է (2030՝ 1 մարզում փորձարկում):
[27] Տրանսպորտային ծախսերը հաշվարկված են տունայցերի, մոնիթորինգի և երեխային ընտանիք կամ այլընտրանքային խնամքի տեղափոխելու համար: